«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ-ի ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի խորհրդի 15.09.2015թ-ի թիվ 21 արձանագրությամբ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՍՊԸ-ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի.

RL 1-001 կանոնների 6.4-րդ կետի խախտման համար Ընկերությանը հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի, RL 1-001 կանոնների 8.3.1-րդ կետի, RL 1-017 կանոնների 5-րդ կետի խախտման համար Ընկերությանը հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով, ինչպես նաև Ընկերությանը հանձնարարվել է 10 աշխատանքային օրվա ընթացքում Բյուրոյին ներկայացնել խախտման վերացումը հավաստող փաստաթղթերի պատճենները: